# ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
# ՑՈՂԱՐԿՈՒՄՆԵՐ

Ցողարկումները ցուցված են կենդանիների մաշկի վրա մակաբուծող պարազիտների ոչնչացման համար:

Իրականացվում են ինչպես բուժիչ, այնպես էլ կանխարգելիչ նպատակներով:

Գերադասելի է, որ ցողարկումներն **անցկացվեն պարզ պայծառ եղանակներին**, միայն հարկադրված դեպքերում կատարել նաև ցուրտ եղանակներին, այն էլ` ոչ սառը ջրով: Ցողարկումներ կարելի է իրականացնել մի շարք պարազիտային հիվանդությունների դեպքում`

- **լվակրության**
- **ոջլոտության**
- **տզերի**
- **մազակերների առկայության**
- **հիպոդերմատոզի** և այլն:

Ցողարկումների համար կիրառում են անասնաբուժական նշանակության տարբեր նյութեր, ինչպիսիք են` **նեոցիդոլը, դիազոն-600-ը, ռացիդոլը, էկտոցիդը** և այլն:






## *Զգուշացում*

Վերոնշյալ նյութերը մեծ դոզաներով օգտագործելու դեպքում կարող են առաջացնել թունավորումներ, քիմ. այրվածքներ, ծանր դեպքերում նաև կենդանու անկում:

Հակացուցված է ցողարկել հյուծված, թույլ և հիվանդ կենդանիներին:

**Նշված նյութերի օգտագործման կարգը.** 1լ ջրի հաշվով ավելացնել 1մլ նյութ, խառնել մինչև համասեռ խառնուրդի վերածվելը:

Ցողարկել մազածածկույթի հակառակ ուղղությամբ այնպես, որ հեղուկի կաթիլները հասնեն մազի հիմքին:

Ցողարկումների միջոցով կենդանիները ազատվում են մակաբույծներից և կանխարգելվում է դրանց կողմից հարուցվող ու փոխանցվող հիվանդությունները, որի արդյունքում բարձրանում է կենդանիների մթերատվությունը:


Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

SDA Strategic Development Agency
Strategies for Development

«ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ»
"LIVESTOCK DEVELOPMENT IN THE SOUTH OF ARMENIA"